

H.Ts. PETROSYAN

**MANIFESTATIONS OF POLYSEMY AND HOMONYMY OF TERMS IN  
THE ARMENIAN SCIENTIFIC AND TECHNICAL LEXICOGRAPHY**

The cases of the term polysemy and homonymy in the Armenian scientific and technical terminology are considered. Polysemy, being a regularity of the word stock development, is unavoidable in terminology, too. While unreasonable homonymy can create a confusion when using terms, it is necessary that specialists sometimes revise and clarify the terms used in their areas of research.

**Keywords:** polytechnic dictionary, polysemic and homonymic terms, confusion in terms, regulation of term systems.

ՀՏԴ 81'276.6: 811.111:004

**Հ.Ս. ՂԱԶՈՅԱՆ**

**ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՆԳԼԵՐԵՆ ՏԵՐՄԻՆՆԵՐՈՒՄ  
ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

Քննվում են հաշվողական տեխնիկայի ոլորտում փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորները: Անգլերենի տերմինակազմության մեջ կարևոր դեր ունի փոխաբերականացումը: Գիտական հասկացություն նշանակելու համար փոխաբերականացման գործընթացը սկսվում է լեզվում համագործածական բառի ընտրությամբ: Հաշվողական տեխնիկայի ոլորտում անընդհատ նոր զարգացումներ են արձանագրվում: Այս պարագայում անհրաժեշտ է կատարել փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորների քննություն:

**Առանցքային բառեր.** փոխաբերականացում, տերմին, գիտական լեզու, հասկացություն, աղբյուր տիրույթ, թիրախ տիրույթ:

**Ներածություն:** Գիտական լեզվում փոխաբերականացումն իմաստաբանական գործընթաց է, որը հիմնված է արտալեզվական միջավայրի երևույթների վրա, ինչպես նաև պայմանավորված է ներլեզվական հարաբերություններով, այն կապերով, որոնք գոյություն ունեն հենց լեզվի բառիմաստային համակարգում:

Փոխաբերականացման գործընթացն սկսվում է տերմինը համագործածական լեզվում առկա բառից տարանջատելուց [1], որին հաջորդում է համագործածական լեզվում համապատասխան բառ փնտրող մասնագետի մտավոր գործունեությունը: Բառը տերմինաբանական դաշտում կորցնում է իր համագործածական բառապաշարային նշանակությունը և ձեռք բերում համապատասխան գիտական հասկացության նշանակությունը: Հայ լեզվաբանության մեջ այս երևույթն անվանում են բառիմաստի տերմինացում [2]: Անգլերենում հաշվողա-

կան տեխնիկայի ոլորտին առնչվող տերմինների գրեթե մեծ մասը ստեղծվել է փոխաբերականացման արդյունքում, քանի որ մարդկային գործունեության ընթացքում ստեղծված պարզ բառերը ներթափանցել են էլեկտրոնիկայի աշխարհ, ուստի դրանց քննությունն արդիական է:

**Տերմինների ծագումնաբանական դասակարգումը:** Հաշվի առնելով այն հանգամանքը, որ լեզուն ազդում է մարդկային գործունեության տարբեր ոլորտների վրա (այդ թվում՝ հաշվողական տեխնիկայի) և հիմք ընդունելով Բրայսոնի ու Մյուլլերի տեսությունները՝ փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները կարող են դասակարգվել **մարդաբանական (անփրոպոլոգիական)** և **ոչ մարդաբանական (ոչ անփրոպոլոգիական)** խմբերի: Դեռևս 18-րդ և 19-րդ դարերում մարդաբանական խմբին պատկանող փոխաբերական հիմքով բառերն օգտագործվում էին որպես ֆիզիկական նկարագրության և մարդկանց հետ շփման միջոց [3]: Իսկ Մյուլլերն իր «Մարդաբանական արտահայտությունների ընկալումը ծրագրավորման ձեռնարկներում» հոդվածում նշում է, որ մարդկանց համար առավել հասկանալի հասկացությունն իրականում մարդն է, որին վերաբերող փոխաբերությունը կոչվում է **մարդաբանական**: Կան արտահայտություններ, որոնք ենթադրում են, որ ծրագրերն ունեն զգացողություններ: Դրանք կարողանում են կատարել մարդկային լեզվով նշված գործողություններ: Դրանց ոչ սովորական (մտավոր) գործունեությունը կարծես ընկալվում է որպես մարդածին [4]:

**Մարդաբանական խմբին** են պատկանում փոխաբերականացման արդյունքում ձևավորված այն տերմինները, որոնք արտացոլում են մարդու սոցիալական գործողությունների ֆիզիկական, բարոյական և մտավոր հատկությունները: Այդպիսիք են, օրինակ, **մասնագիտություններ ցույց տվող բառերը**: Այսպես, օրինակ՝ **driver** բառի փոխաբերական տեղաշարժի հիմքում **drive** բայն է, որը համագործածական լեզվում արտահայտում է **վարել, շարժել, տանել** իմաստները: **Driver** տերմինը փոխաբերականացմամբ ստացել է **սարքավարիչ** իմաստը: Վերջինս ծրագիր է կամ հրամանաշար, որն օգտագործվում է մուտքի կամ ելքի սարքերը փոխկապակցելու ու կառավարելու համար: **Translator** բառային միավորի փոխաբերական անցման հիմքում **translate** բայն է, որը նշանակում է **թարգմանել**: Ինչպես **թարգմանիչն** է որևէ լեզվից գրավոր կամ բանավոր խոսքը փոխանցում մեկ այլ լեզու, այնպես էլ **փոխադրող ծրագիրն** է մեկ այլ որակյալ ծրագիր փոխադրում մեքենայական կոդի:

Երբեմն փոխաբերականացման հիմք է հանդիսանում երկու հասկացությունների գործառության նմանությունը: Այսպես, օրինակ՝ **wizard** բառային միավորի տերմինային իմաստի հիմքում **հրաշագործ** բառն է, որը նշանակում է հրաշքներ գործող անձ: Վերջինս օժանդակ ծրագիր է, որն օգնում է ինչ-որ բան

ստեղծելուն: Այն հեշտացնում է տվյալ օպերացիոն համակարգի աշխատանքը, հրաշք գործելով՝ կատարում է բարդ գործողություններ: Այս դեպքում կարող ենք ասել, որ փոխաբերական անցումը տեղի է ունենում գործառության համանմանության արդյունքում:

**Մարդաբանական խմբին** են պատկանում նաև **մարմնի մասերի անվանումները և ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառերը:**

Մարմնի մասերի անվանումները վերածվում են տերմինների և կիրառվում հաշվողական տեխնիկայի ոլորտում: Այստեղ տեղին է նշել Ռիքերի այն տեսակետը, որ, ինչպես մարմինն է փոխում իր դիրքը, այնպես էլ փոխաբերականացման արդյունքում կազմված բառերը «շրջում» են իրենց հիմնական իմաստը: Վերջիններս «մարմնավորում» են հասկացությունները՝ առարկային կամ երևույթին կերպարանք հաղորդելով [5]:

Հետաքրքիր է **brain** տերմինի կիրառությունը հաշվողական տեխնիկայի ոլորտում: Վերջինս ունի մեքենայի **ուղեղ** իմաստը: 40-ական թվականներին լույս է տեսնում Ջ. Բերկլիի գիրքը, որտեղ նա առաջին անգամ **brain** բառն օգտագործում էր **giant (հսկա)** և **mechanical (մեխանիկական)** ածականների հետ՝ ստանալով **mechanical brains (մեխանիկական ուղեղ)** կամ **giant brains (հսկա ուղեղ)** բառակապակցությունները: Այդպես էր նա կոչում այն մեքենաները, որոնք մտածում և գործում են ինչպես մարդու ուղեղը: Այս կերպ **brain** տերմինը ներմուծվում է հաշվողական տեխնիկայի ոլորտ [6]:

**Finger** բառը բնորոշվում է որպես մարդու ձեռքի և ոտքի թաթի հինգ վերջավորություններից յուրաքանչյուրը: Մինչդեռ **finger** տերմինը ծրագիր է (համացանցում), որը տեղեկություն է կորզում գործածողի՝ օգտատիրոջ մասին՝ հիմնվելով նրա էլեկտրոնային փոստի հասցեի վրա:

Լես Էռնեստը **finger** ծրագիրը գրել է 1971 թվականին: Այդ ծրագիրը նա տրամադրել է այն օգտատերերին, ովքեր ցանկանում էին տեղեկություններ ունենալ ցանցի կամ համակարգի այլ օգտատերերի մասին: Էռնեստի կարծիքի համաձայն՝ ծրագիրն այդպես են անվանել, քանի որ վերջինս շրջանցել է օգտատիրոջ գաղտնաբառը մատնանշելու և նույնականացնելու անհրաժեշտությունը [[https://en.wikipedia.org/wiki/List\\_of\\_computer\\_term\\_etymologies](https://en.wikipedia.org/wiki/List_of_computer_term_etymologies)]:

Ցանկացած իմաստի էության հիմքում օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ պատկերի ստեղծումն է [7]: **Orphan** բառային միավորի տերմինային իմաստը բխում է վերջինիս՝ աղբյուր տիրույթում արտահայտած իմաստներից, այն է՝ **անսերունջ, մենավոր: Orphan** տերմինը թարգմանաբար նշանակում է **որբուկ, ծնողազուրկ:** Վերջինս պարբերության առաջին տողն է, որը տպված է սյունակի ներքևում, իսկ պարբերության մնացած մասը տպված է հաջորդ սյունակի

վերևում: Վերոնշյալից հետևում է, որ «որբուկը» անտեսված տող է և «տգեղացնում է էջը»: **Orphan** տերմինը կիրառվում է **orphan file (անտեսված նշոց)** և **orphan process (անտեսված գործընթաց)** բառակապակցություններում:

**Ոչ մարդաբանական խմբին** են պատկանում փոխաբերականացման արդյունքում ձևավորված այն տերմինները, որոնք արտացոլում են մարդուն շրջապատող իրականությունը: Հիշյալ տերմինների ձևավորման մեջ փոխաբերականացումը ցույց է տալիս երկու տարբեր առարկաների արտաքին նմանության հարաբերակցությունը: Վերջիններս կարող են լինել **կենդանիների, կենցաղային իրերի, հագուստի, բույսերի կամ էլ վերացական հասկացությունների անվանումներ**: Փոխաբերական անցումը տեղի է ունենում կենդանիների անվանումներից առարկաներին: Այսպես, օրինակ՝ **mouse** բառը հայտնի է **մուկ** իմաստով: Հաշվողական տեխնիկայի ոլորտում **mouse** բառը փոքրիկ, ձեռքով ներմուծման սարք է, որը շարժվում է հարթ մակերեսի վրա, որպեսզի ղեկավարի սլաքի դիրքը էկրանին [8]: Հիշյալ բառի փոխաբերական տեղաշարժն իրականացվում է ֆիզիկական նմանության հիման վրա, այսինքն՝ առաջացել է մկան՝ կրծողի ձևի և չափի հետ նմանությունից, որի լարը հիշեցնում է վերջինիս պոչը: Հետևաբար, այս տերմինի իմաստաբանական ձևավորմանը նպաստել է արտաքին նմանության զուգորդումը, որի շնորհիվ վերջինս լայն կիրառություն ունի որպես համակարգչի մաս:

**Bug** տերմինն առաջին անգամ կիրառել է Թոմաս Էդիսոնը: Վերջինս մեքենայի մեջ նկատել էր սխալ կամ անսարքություն: Այս «սխալն» իրականում փայտոջիլ էր: Առաջին համակարգչային սխալը հայտնաբերած թիմի մեջ էր Գրեյս Հոփերը: Երբ նրանք բացում են համակարգչի սարքակազմը, փայտոջիլ են տեսնում: Թակարդն ընկած միջատն իրականում խափանել էր համակարգչի աշխատանքը [9]: Այսպիսով, կարող ենք փաստել, որ փոխաբերական անցումը տեղի է ունենում՝ հիմք ընդունելով վերջինիս՝ աղբյուր տիրույթում արտահայտած **փայտոջիլ** իմաստը: **Bug** տերմինն արտահայտում է **ծրագրային սխալ, վրիպում** իմաստները: Մշակողների կողմից շատ սխալներ առաջանում են սկզբնաղբյուրը կամ ընդհանուր ձևավորումը կառուցելիս: Սխալներ են տեղի ունենում նաև տվյալ ծրագրերում օգտագործվող բաղադրիչների և գործառական համակարգերի շրջանակներում:

**Cookie** տերմինը ստեղծվել է ցանցային զննարկիչներ ծրագրավորող Լու Մոնտուլիի կողմից: Վերջինիս փոխաբերական անցման հիմքում **magic cookie (կախարդական թխվածքաբլիթ)** բառակապակցությունն է: Համաձայն մի վարկածի՝ այն «թխվածքաբլիթ էր՝ ներկառուցված հաղորդագրությամբ» [https://www.inlife.co.uk/why-are-cookies-called-cookies/]: **Cookie** տերմինային միավորը կիրառվում է Unix ծրագրավորողների կողմից [10]: Վերջինս տվյալների փաթեթ է, որը ստանում է ծրագիրը և անփոփոխ հետ ուղարկում:

Միացման և տեղափոխման գործառույթի նմանության արդյունքում է ձևավորվել **bridge** տերմինը, որն ունի **կամուրջ** իմաստը: Վերջինս սարք է, որը կիրառվում է երկու ցանցեր իրար միացնելու նպատակով և թույլ է տալիս, որ տեղեկույթը հոսի այդ երկու ցանցերի միջև:

Փոխաբերականացման արդյունքում գործառույթի նմանության հենքով է ձևավորվել **jam** բառի տերմինային իմաստը: **Jam** բառը համագործածական լեզվում արտահայտում է բազմաթիվ իմաստներ, այն է՝ **մուրաբա, սեղմում, հրմշտոց, խափանում, խանգարում, կուրակում**: Խցանելու և խանգարելու գործառույթի նմանության հենքով վերջինս՝ որպես տերմին, օգտագործվում է հաշվողական տեխնիկայի ոլորտում: **Jam** տերմինային միավորն ունի **խցանում** իմաստը, այն է՝ անսարքության պատճառով գործընթացի կամ մեխանիզմի աշխատանքի դադարում:

**Ոչ մարդաբանական խմբին** է դասվում **tree** համագործածական բառը, որը փոխաբերական տեղաշարժի արդյունքում վերածվել է տերմինի: Բացատրական բառարանում վերջինս սահմանվում է որպես բազմամյա բույս, որի բնափայտը ամուր բուն ունի, իսկ բնի վրա՝ ճյուղերի պսակ [<https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/tree?q=tree>]:

Հաշվողական տեխնիկայի ոլորտում կիրառվելիս **tree** տերմինը ցույց է տալիս, որ տվյալների յուրաքանչյուր միավոր ճյուղերով կապված է մի քանի այլ տվյալների հետ: Այսպիսով, հիշյալ տերմինային միավորի փոխաբերական անցումը տեղի է ունենում արտաքին նմանության զուգորդմամբ, որի շնորհիվ վերջինս դառնում է տեխնիկական տերմինի կարևոր բաղադրիչ: **Tree** տերմինն օգտագործվում է **tree of folders (ծրարների ծառ)** և **binary tree (երկուական ծառ)** բառակապակցություններում:

**Եզրակացություն:** Այսպիսով, հիմք ընդունելով կատարված վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ անգլերենում փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինների իմաստն անմիջականորեն կապված է մեզ շրջապատող իրականության, առարկաների և երևույթների արտացոլման հետ: Բառային միավորը, կիրառվելով հաշվողական տեխնիկայի տերմինաբանության մեջ, ձեռք է բերում մեկ այլ իմաստ՝ հիմնվելով առարկաների, երևույթների արտաքին և ներքին նմանության վրա: Փոխաբերականացման արդյունքում տերմին դարձած միավորների իմաստն ամրապնդվում է բառիմաստի զարգացման փուլերի ընթացքում: Փոխաբերականացումը նպաստում է գիտության առանձին ճյուղերի տերմինաբանության կազմավորմանն ու տեսությունների ձևավորմանը: Այն առանցքային դեր ունի հատկապես հաշվողական տեխնիկայի անգլերեն տերմինների ձևավորման գործում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Зарипова А.Н.** Экономическая терминология в немецком, русском и татарском языках: Дис. канд. фил. наук.- Казань, 2004.- 208 с.
2. **Պետրոսյան Հ.Յ.** Տերմինագիտության հիմունքներ. Դասագիրք.- Երևան, «Ճարտարագետ» հրատ., 2010.- 503 էջ:
3. **Bryson M.A.** Nature, narrative, and the scientist-writer: Rachel Carson's and Loren Eiseley's critique of science, *Technical Communication Quarterly*.- 2003.- 12, P. 369-387.
4. **Mulder M.N.** Perception of Anthropomorphic Expressions in Software Manuals. *Journal of Technical Writing and Communication*.- 1996.- Vol. 26, issue 4, P. 489-506.
5. **Ricoeur P.** The metaphorical process as cognition, imagination and feeling. // *Critical Inquiry*.- 1978.- Vol. 5, №1: Special Issue on Metaphor. Aut., pp. 143-159. URL.: <http://www.jstor.org/stable/1342982>
6. **Berkeley E.C.** Giant brains or machines that think. Science Editions, Inc.- New York, 1961, URL.: [https://monoskop.org/images/b/bc/Berkeley\\_Edmund\\_Callis\\_Giant\\_Brains\\_or\\_Machines\\_That\\_Think.pdf](https://monoskop.org/images/b/bc/Berkeley_Edmund_Callis_Giant_Brains_or_Machines_That_Think.pdf)
7. **Ивина Л.В.** Лингво-когнитивные основы анализа отраслевых терминосистем (на примере англоязычной терминологии венчурного финансирования): Учебно-методическое пособие .- М.: Академический Проект, 2003.- 304 с.
8. **Գրիգորյան Խ.** Անգլերեն-հայերեն համակարգչային եզրերի բառարան.- Երևան, «Անկյունաքար» հրատ., 2003.- 388 էջ:
9. **McFadden Christopher.** The Origin of the Term «Computer Bug».- June 12, 2020, URL.: <https://interestingengineering.com/the-origin-of-the-term-computer-bug>
10. **Hill S.** Are cookies crumbling our privacy? We asked an expert to find out.- March 29, 2015, URL.: <https://www.digitaltrends.com/computing/history-of-cookies-and-effect-on-privacy/>

### Աղցանց աղբյուրներ

1. [https://en.wikipedia.org/wiki/List\\_of\\_computer\\_term\\_etymologies](https://en.wikipedia.org/wiki/List_of_computer_term_etymologies) (15.10.2022)
2. <https://www.inlife.co.uk/why-are-cookies-called-cookies/> (15.10.2022)
3. <https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/tree?q=tree> (15.10.2022)

## Ա.Տ. ԿԱԶՋՅԱՆ

### ПРЕДПОСЫЛКИ МЕТАФОРИЗАЦИИ АНГЛИЙСКИХ ТЕРМИНОВ ПО ВЫЧИСЛИТЕЛЬНОЙ ТЕХНИКЕ

Рассматриваются единицы, ставшие терминами в результате метафоризации в области вычислительной техники. Метафора играет важную роль в терминологии. Для обозначения научного понятия процесс метафоризации начинается с выбора обычного слова в языке. В области вычислительной техники постоянно фиксируются новые разработки. В этом случае необходимо глубокое изучение терминов, образованных путем метафоризации.

**Ключевые слова:** метафоризация, термин, научный язык, концепт, исходная область, целевая область.

H.S. GHAJOYAN

**BASES OF METAPHORIZATION IN ENGLISH TERMS ON COMPUTER SCIENCE**

The units that have become terms as a result of metaphorization in the field of computer science are analyzed. Metaphorization plays an important role in the process of term formation. To denote a scientific concept, the process of metaphorization begins with the choice of a usual word in the language. New developments are constantly being recorded in the mentioned field. In this case, it is necessary to study the terms formed on the basis of metaphorization.

**Keywords:** metaphorization, term, scientific language, concept, source area, target area.

ՀՏԴ 82'282:811.19=161.1=111

**Հ.Ձ. ՂԱԶԱՐՅԱՆ**

**ԲԱՄԲԱՍԱՆՔ, ՉԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՇԱՂԱԿՐԱՏԱՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Դիտարկվում և զուգադրվում են հայերենի, ռուսերենի և անգլերենի *բամբասանք*, *չարախոսություն*, *շաղակրատանք* արտահայտող դարձվածքների իմաստային, կառուցվածքային, քերականական, ոճական առանձնահատկությունները: Բացահայտվում են նշված միավորների առանձնահատկությունները, ընդհանրություններն ու տարբերությունները, որոնք նպաստում են դիտարկվող լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների և տարբերությունների բացահայտմանը:

**Առանցքային բառեր.** դարձվածք, իմաստ, առանձնահատկություն, ընդհանրություն, տարբերություն, լեզվամտածողություն, հոմանիշ, հականիշ, համարժեք:

Բարին և չարը՝ բարոյագիտության հիմնական տարակարգերը, բնորոշում են առանձին մարդկանց, մարդկանց խմբերի և պատմական խոշոր իրադարձությունների բարոյական գնահատականները և կազմում են բարոյականի և անբարոյականի բովանդակությունը: Բարին այն է, ինչը հասարակությունը համարում է բարոյական, պատշաճ, արժանի ընդօրինակման: Չարը հասարակական զարգացմանը հակադիր բացասական արարքներն ու երևույթներն են, որոնք չի ընդունում հասարակությունը՝ համարում է անբարոյական և դատապարտում (1): Բարությունը ներառում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են բարյացակամությունը, մեծահոգությունը, գթասրտությունը, կարեկցանքը, չարությունը, ընդհակառակը, դաժանությունն ու անգթությունը: Նշված դրական կամ բացասական զգացումները հուզում, ալեկոծում են մարդու միտքն ու հոգին, հիմք հանդիսանալով լեզվական վերացարկումների համար, ինչն էլ իր հերթին դառնում է դարձվածքների առաջացման աղբյուր: